Ցաւուրս յայսոսիկ ի սահմանս ուզուն չարշըին, ի փոանէ միոջէ հացագործի, յանկարծակի հանեն զեօթն մեռեալս մի զկնի միոյ: Զոր տեսեալ դուլլախճիին՝ ըմբռնեն զթէզկեահտարն և զայլսն, և քննեն զիրսն: Պատասխանեն նոքա թէ մեք ոչինչ գիտեմք: Հարցանեն, զի՞նչ կերայք: Ասեն յայս ինչ պախալէ առաք զբրինձ և զպէքմէզ: Ասէ. այո՛: Ասեն. ա՛ռ և դու ի պէքմէզէն. ըմպէ և նա միամտաբար: Եւ զկնի երկուց կամ երից ժամուց՝ մեռանի և պախալն: Ցայնժամ պարպեն զթէսթին և ելանէ անտի օձ մի մեծ մեռեալ: Ի թօփղանեան ձուլեցին զ120 փոքրիկ թօփս. զ60 առաքեցին ի մէքէն ընդդէմ արաբացւոց, և 260 ևս առաքելոց են: Ձուլեցին և զերկու մեծ թօփս, որոյ զնտակաց չափն է յոյժ մեծ, և յարձակեցին ի թօփղանայէն, և գնտակքն հասանեն մինչև ի քաղկեդոն. զուցէ աւելի:

Ցաւուրս յայսոսիկ իսկ սկսաւ ժանտամահն. զվերջն ոչ գիտեմ:...

1759 յԱպրիլի 29 Ն. Ծ. Հ. Յակոբոս վրդ. Զամչեանց, Մխիթարեան
[Կ. Պոլիս]

ՄԺԹ.

Եր. Տէր Կոմիտասի գերեզմանին շուրջ անցողակի ծանօթութիւն մը տալէ վերջ նամակագիրս կը տեղեկագրէ նաև Սարգիս Սառաֆեանի և ժամանակակից դէպքերու մասին:

Յարգոյապատիւ և գերապայծառ տեառն Ստեփաննոսի վարդապետի
և արքայծոր մեծաւ խոնարհութեամբ և սիրով ողջոյն ի Քրիստոս

... Քարակոյն, որ շինեաց զվէմ գերեզմանի տէր Կոմիտասին, կոչեցեալ փորեազ, զոր բարւոք գիտէ հ. մկրտիչն, սպասէ թղթոյն նորա և գրոյ վասն զեկուցանելոյ սմա զարհեստ փայլեցուցանելոյ զմարմարիոնն, զի ոչ գիտեն աստ: Տեղեկասցի այդր և գրեսցէ ըստ կարգի ամենայն պարագայիւք, զի արարեալ սմա զայս բարութիւն ստանամք զշահ հոգևոր և մարմնաւոր, զոր յետոյ գրեսցուք ի կատարածի ելից իրացն:... Սարգիս վարդապետն [Սառաֆեան] հրամանաւ պատրիարքին եկն ի քիայ կղզւոյն յիզմիրնիայ, և անտի ի Պուրսայ երթալ առաջնորդ լինել եւդոկիոյ. և կարծեմք թէ երթայ, զի ոչ ևս կարէ ի կոստանդինուպօլիս գալ, զի մի խռովութիւն ինչ լինիցի ընդ պատրիարքին: իսկ արգիլումն զգեստուց հպատակաց տակաւին նորոգեցաւ ի թագաւորէն, զի էրէկ յանգէտս պատահեալ նորա երկուց ի հայոց եգիտ ագուցեալ յոտս զդեղին թէչլիկս, հրամայեաց կառափնատել զնոսա. այլ զի՜ջեալ յաղաչանաց ոմանց առաքեաց ի թէրսխանան. և ապա հրաման եղև պատրիարգաց պատուիրել ժողովրդոց զգոյշ լինիլ, հնազանդ կալ հրամանի թագաւորին:... Լսեմք, թէ ի կողմանս արևելից ի տեղիս տեղիս գոյ ժանտ ախտ. և մինչև ի սահմանս Կարսայ հասեալ է լէզկի ազգն անօրէն, գերելով և սպանանելով, և աւերելով զաշխարհս հայոց, և չիք ոք, որ հոգասցի կամ ողորմեսցի նոցա: Եւ որ ողորմելոցն է, նա ևս առաւել խիստ կորուսիչ է:...

Ցամի տեառն 1759 ի յունիսի 19
ի կոստանդնուպօլիս

Նուաստ անպիտան և անարժան
Հ. Իգնատիոս վրդպ. Մխիթարեան